ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» --------- 2024թ. **N-----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N 561-Ն որոշման հավելվածով սահմանված ցանկի «ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ» բաժինը լրացնել նոր 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

54	Ղազար Փարպեցու փողոց
55	Հին Երևանցու փողոց
56	Բայրոնի փողոց
57	Ավագ Պետրոսյան
58	Ալ.Թամանյան
59	Մովսես Խորենացու 1-ին նրբանցք
60	Դեղատան փողոց
61	Գևորգ Քոչարի փողոց

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 561-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում կազմակերպել ավտոկայանատեղեր, ինչն ուղղված է Երևանի կենտրոնի բեռնաթափմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկվում էհավելվածի Կենտրոն վարչական շրջանի ցանկին ավելացնել Ղազար Փարպեցի, Հին Երևանցու, Բայրոնի, Ավագ Պետրոսյան,Ալ.Թամանյան փողոցները, Մովսես Խորենացու 1-ին նրբանցք, Դեղատան, Գևորգ Քոչարի փողոցները:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N561-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ